Սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրման ընթացքի և հետագա աշխատանքների մասին:

Ներկայացվող ժամանակահատվածում որոշակի աշխատանքներ են կատարվել սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի վերահսկողության, մոնիթորինգի և գնահատման ուղղությամբ: Այս աշխատանքները, իրենց գործառույթներին համապատասխան՝ կատարվել են ԱՍՀՆ աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության, աուդիտի բաժնի, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոնի և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ արձանագրված խախտումների և թերությունների վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ, իսկ դրանք բացառելու և կանխելու նպատակով իրականացվել են ստուգման ակտերի և ուսումնասիրության արդյունքների վերլուծություն: Ի հայտ են բերվել ռիսկային համարվող տարաբնույթ խնդիրները և երևույթները նպաստների, կենսաթոշակների, զբաղվածության, բժշկասոցիալական փորձաքննության ոլորտներում, տարեցների խնամքի տուն ինտերնատներում, մանկատներում, երեխաների գիշերօթիկ և ցերեկային խնամքի հաստատություններում, դրանց հիման վրա շահագրգիռ կողմերի հետ կազմակերպվել են քննարկումներ, ներկայացվել են առաջարկություններ ծառայությունների մատուցման որակի բարելավման, բացահայտված խնդիրների լուծման, իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

Այս ոլորտում կարևոր գործիք է նաև «Նորք»-ի միջոցով սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի շահագործումը և այդ համակարգերի շտեմարանների և օրենսդրությամբ սահմանված պետական այլ մարմիններից ստացվող տեղեկատվության պարբերական և ըստ անհրաժեշտության համադրումները, որոնք օգտագործվում են դիտարկվող ծրագրի հասցեականությունը բարձրացնելու, ոչ օրինական ճանապարհով կատարված դրամական վճարումների հետ գանձումն ապահովելու համար:

Ազգային ինստիտուտի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում բացահայտվել են աշխատաշուկայի, աշխատանքային պայմանների, աշխատանքի վարձատրության, կենսաթոշակային ապահովության, հաշմանդամների, ինչպես նաև աղքատության հիմնախնդիրների հետ կպված ռիսկերը և կանխատեսվող զարգացումները:

Այնուհանդերձ կատարված աշխատանքների համակողմանի վերլուծությունը, հանրությանը հայտնի երևույթների ի հայտ գալը ցույց տվեցին, որ վերահսկողության, մոնիթորինգի և գնահատման գործընթացների համակարգված իրականացումն ապահովելու, ռիսկերը կանխարգելելու համար դեռևս պետք է կատարվեն բավականին մեծածավալ աշխատանքներ և լուծվեն բազմաթիվ խնդիրներ, որոնցից են.

1. ԱՍՀ նախարարության համակարգում ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մոնիթորինգի և արդյունավետության գնահատման ընթացակարգերը կարգավորող իրավական դաշտի անկատարությունը:
2. Իրականացվող որոշ ծրագրերի համար նպատակների և ակնկալվող արդյունքների անհստակությունը և անհամապատասխանությունը:
3. Ծրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկման համար համապատասխան մոնիթորինգային ցուցանիշների (հատկապես որակական ցուցանիշների) բացակալությունը:

4. Մոնիթորինգ և գնահատում իրականացնելու միասնական մեթոդաբանության բացակայությունը՝ ծառայությունների մատուցման, ծրագրերի կառավարման և քաղաքականության մշակման մակարդակներում:
5. Իրականացվող ծրագրերից և մատուցվող ծառայություններից շահառուների բավարարվածության աստիճանի ուսումնասիրությունների և դրանց արդյունքների վերլուծության բացակայությունը:
6. Անձնակազմի կարողությունների և գիտելիքների բարձրացման անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը, ինչպես նաև այն հանգամանքը, որ սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող շուրջ 70 ծրագրեր, որոնց շրջանակներում տարաբնույթ ծառայություններ են մատուցվում բնակչության տարբեր խմբերին՝ առնչվելով ուղակիորեն կոնկրետ մարդուն (կենսաթոշակառուներ, անապահով ընտանիքներ, առանց ծնողական խնամքի մնացած և ռիսկի գոտում հայտնված երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձիք, տարեցներ, աշխատանք փնտրողներ, գործազուրկներ և այլն), իսկ այդ ծրագրերի իրականացման համար ծախսվում է պետական բյուջեի 27-30%-ը, առաջնահերթ համարվեց սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մոնիտորինգի և արդյունավետության գնահատման համակարգի մշակումը և գործնական կիրառումը:

Խնդիրն առավել կարևորվում է հատկապես իրականացվող բարեփոխումների համատեքստում, քանի որ դրանց իրականացումը հնարավոր է միայն ժամանակակից արդյունավետ պետական կառավարման համակարգի առկայության դեպքում, իսկ արդյունավետ պետական կառավարման համակարգ նշանակում է, նախ և առաջ, պետական բյուջեի միջոցների արդյունավետ ծախս, նպատակային ծրագրեր, երբ հստակ են ակնկալվող արդյունքները, առկա են դրանք գնահատելու համար անհրաժեշտ կառուցակարգերը, որոնք հնարավորություն կտան պարբերաբար ճշտել վարվող քաղաքականությունը, կրճատել կոռուպցիոն ռիսկերը, առկա ռեսուրսները ուղղել ակնկալվող արդյունքների ապահովմանը՝ հաշվի առնելով ընթացիկ վիճակը և, որը նույնպես խիստ կարևոր է, նաև կոնկրետ շահառուների կարծիքը:

Ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և գնահատման միասնական համակարգի ներդրման գործընթացը առավել ընդգրկուն դարձավ 2013 թվականին, երբ Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ համապատասխան խորհրդատու կազմակերպության և նախարության աշխատանային խմբի անմիջական մասնացությամբ, հաշվի առնելով միջազգային փորձը, մշակվեց ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրման հայեցակարգը, կառուցվածքագործառութային մոդելը, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերի նկարագրերը և մեթոդաբանությունը: Մշակված մեթոդաբանության հիման վրա կատարվեցին ԱՍՀՆ իրավասության ոլորտի տարբեր ենթաոլորտներում գործող առաջին հինգ ծրագրերի փորձնական մոնիթորինգի և արդյուավետության գնահատում:

Արդեն 2013թ. հոկտեմբեր ամսին ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով հաստատվեցին <<Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական բյուջեի շրջանակներում իրականացվող ծրագրերի (մատուցվող ծառայությունների) մոնիթորինգի և արդյունավետության գնահատման հայեցակարգը, մեթոդաբանությունը, գնահատման կարգը>>: Հիմք ընդունելով նախարարի այդ հրամանը նոյեմբեր – դեկտեմբեր ամիսներին իրականացվեցին երեք ծրագրերի՝ «Մտավոր խնդիրներ ունեցող դեռահասներին և երիտասարդներին ցերեկային խնամք, պաշտպանություն և տարրական մասնագիտական հմտությունների ուսուցման ապահովում՝ սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման միջոցով», «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի կարկտահարությունից տուժած գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր

կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց զբաղվածության խթանման միջոցով նրանց գյուղացիական տնտեսությունների վերականգնում» և «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրերի մոնիթորինգ և նախնական գնահատում, որոնք ստացան համապատասխանաբար 94,84, 72,92 և 83,76 միավոր հաշվառված 100 միավորանոց գնահատման համակարգում:

Այս ծրագրերի մոնիթորինգի և նախնական գնահատման գործընթացում նախանշվեցին այն հիմնական դժվարությունները, որոնց կարող ենք հանդիպել հետագայում ծրագրերի մոնիթորինգ և գնահատում իրականացնելու ժամանակ, ինչպես նաև վեր հանվեցին ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը, նախանշվեցին դրանց հետագա բարելավման քայլերը:

2013թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ ԱՍՀ նախարարի 172-Ա/1 հրամանով հաստատվել է ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների) մոնիթորինգի և արդյունավետության գնահատման 2014թ. հանձնարարականը և տարեկան ծրագիրը, որը ներառում է թվով 14 ծրագիր (<<Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը>> և նրանում ներառված թվով 10 ծրագրեր, ինչպես նաև այլ ենթաոլորտների երեք ծրագրեր): Մշակման փուլում է «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի մոնիթորինգի ու գնահատման» կարգը, որը բխում է «Զբազվածության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներից:

ՄԳ համակարգի ներդրման և լիարժեք գործարկման ապահովման համար այսուհետ նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Վերանայել ծրագրերը (մատուցվող ծառայությունները) նկարագրող իրավական ակտերը, հստակեցնելով դրանցում ընթացիկ և հեռահար նպատակները, իրականացման մեխանիզմները, վերջնական արդյունքները:
- Մշակել և ներդնել նոր ծրագրերի իրականացման հետ կապված ռիսկերի բացահայտման և գնահատման մեթոդաբանություն:
- Մշակել և ներդնել ծրագրերի և սոցիալական ծառայությունների մատուցման մոնիթորինգի և արդյունավետության գնահատման էլեկտրոնային համակարգ:
- Մշակել և ներդնել ծրագրերի (ծառայությունների մատուցման) մոնիթորինգի և արդյունավետության գնահատման անձնագրեր, քանկական և որակական մոնիթորինգային ցուցանիշներ, հաշվետվությունների ներկայացման ձևաչափեր,
- Մշակել և ներդնել ծրագրերի շահառուների կարծիքների ուսումնասիրության, ՄԳ համակարգի համար անհրաժեշտ որակական ցուցանիշների հավաքագրման համապատասխան գործիքներ և ընթացակարգեր:
- Մշակել և ներդնել մոնիթորինգի և գնահատման արդյունքների կիրառման և հրատարակման ընթացակարգեր, մոնիթորինգի և գնահատման արդյունքում կատարված առաջարկությունները և եզրակացությունները համապատասխան իրավական ակտերում ներառելու նպատակով:

ԳԾԱՆԿԱՐ

ծրագրերի /ծառայությունների ՄԳ իրականացման կազմակերպա-կառավարչական մոդելը